ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #34

ՄՀՀ ՆՈՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) նոր անհատական կազմի առաջին նիստը:

ՍՈՑԳՈՎԱԶԴՆԵՐԻ ՆԱԽԱԴԻՏՈՒՄ – ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կարճ սոցիալական հոլովակներ, որոնք վեր են հանում ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրականությունն ու անհանդուրժողականությունը, Հայաստանում տիրող մթնոլորտը նրանց հանդեպ:

«ՁԼՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»

Դասընթաց ՔՀԿ ներկայացուցիչների կարողությունների զարգացում մարդու իրավունքների, հանրային խոսքի հմտությունների, մոնիթորինգի և հաշվետվողականության ոլորտներում:

Ո՞Վ Է ՀԱՋՈՐԴԸ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ

Ով է հաջորդը. ընտանեկան բռնության զոհերի հիշատակի մոմավառություն Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ի աշխատակիցներն արեցին իրենց բողոքի քայլն ընդդեմ ընտանեկան բռնության՝ մասնակցելով Հոկտեմբերի 1-ին Ազատության հրապարակում կազմակերպված հիշատակի մոմավառությանը:

Չեխական կողմի հետ համագործակցությունը լինելու է շարունակական. ՆՍՀԿ նախագահ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչները սեպտեմբերի 23-28 Չեխիայում մասնակցեցին տեղի Պորադնա կազմակերպության կողմից անցկացվող «Խտրականության դեպքերի իրավիճակային դիտարկում» աշխատանքային հանդիպմանը: Ըստ ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանի այցի նպատակը Չեխիայում մարդու իրավունքների, խտրականության և ատելության դեմ պայքարում ներգրավված ՔՀԿ-ների և ՄԻՊ-ի աշխատանքը ուսումնասիրելն ու խտրականության դեպքերի փաստագրում կատարել էր՝ հետագայում այս փորձի օրինակով Հայաստանում ևս խտրականության դեպքերի փաստագրում անցկացնելու համար:

«Պորադնա կազմակերպությունը ծավալում է իրավապաշտպան գործունեություն՝ մասնավորապես աշխատելով Չեխիայում խտրականության կանխարգելման ուղղությամբ»,- ընդգծում է ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը՝ հավելելով, որ այցի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ Պրահա քաղաքում գործող մի շարք ոլորտային ՔՀԿ-ների ներկայացուցիչների, ինչպես նաև Չեխիայի ՄԻՊ-ի հավասար վերաբերմունքի վարչության պետ Պյոտր Պոլակի հետ:

Շարունակությունը էջ 7

ՄՀՀ ՆՈՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

2018թ.-ի օգոստոսի 2-ին Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի նիստերի դահլիճում ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի նախագահմամբ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) նոր անհատական կազմի առաջին նիստը: Նիստին մասնակցում էին ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի պորտֆոլիո մենեջեր Վալերիա Գրիշեչկինան, ՀՀ Առողջապահության նախարարության, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ֆինանսիստ Արման Սահակյանը և առողջության պահպանման, մատչելիության և հասանելիության ծրագրերի համակարող Արտյոմ Մովսեսյանը:

Նիստի օրակարգում դրված հարցերն էին ՄՀՀ փոխնախագահի ընտրությունը և ՄԻԱՎ-ի ու ՁԻԱՀ-ի դրամաշնորհային հայտի ներկայացումն ու հաստատումը:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ծրագրերի համակարգող Աստղիկ Գրիգորյանը միաձայն ընտրվեց ՄՀՀ փոխնախագահ:

ՀՀ առողջապահության նախարարության Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար Հասմիկ Հարությունյանը ներկայացրեց ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի դրամաշնորհային հայտը, որն ուղեկցվեց հարց ու պատասխանով:

ՄՀՀ անդամները միաձայն քվեարկեցին ներկայացված ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի դրամաշնորհային հայտի օգտին և հաստատեցին վերջինիս ներկայացումը Գլոբալ հիմնադրամ նոր դրամաշնորհ ստանալու նպատակով:

ԼԳԲՏ ԹԵՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԱՓԱԶԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՎԱԾ Է. ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Հայաստանում կայանալիք «ԼԳԲՏ-քրիստոնյաների ֆորումի» մասին լուրերի տարածումից հետո մամուլն ու սոցցանցերն ակտիվորեն սկսեցին քննարկել լուրը՝ դատապարտելով գաղափարը և կազմակերպիչներին:
«Մենք, որպես Հայաստանում «ԼԳԲՏ-քրիստոնյաների ֆորումը» հյուրընկալող կողմ, հասարակության կողմից ենթարկվում ենք արդեն սովորական դարձած ճնշումների»,- ռուսական parniplus.com կայքին տված հարցազրույցում ընդգծում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի մի շարք նախագծերի համակարգող Արման Սահակյանը:
«Սեպտեմբերի 23-ին տեղի կունենան Երևանի ավագանու ընտրությունները, որի արդյունքում կընտրվի նոր քաղաքապետ: Ընտրություններին մասնակցում է 9 կուսակցություն և 4 դաշինք: Նոր իշխանություններին դեմ քաղաքական ուժերը սկսել են հոմոֆոբ հռետորաբանությունն ակտիվորեն կիրառել՝ ի շահ իրենց քաղաքական նպատակների:
Մենք հույս ունենք, որ նոր իշխանություններն ու ընտրողները չեն շարունակի նախկին կառավարության ժամանակներին բնորոշ հոմոֆոբ հռետորաբանությունը. չէ՞ որ քաղաքական յուրաքանչյուր մանիպուլյացիայի հետևում մարդկային կյանքեր են»:

Հրապարակման մեջ անդրադարձ կա Ա.Սահակյանի՝ դեռևս գարնանը Nuntiare et Recreare-ին տված հարցազրույցին, որտեղ նշել էր.

«Մենք կանխատեսում ենք, որ ֆորումը կանցնի բարձր մակարդակով և արդյունավետ կլինի: Որովհետև Եվրոպայում ապրող և այնտեղ նմանատիպ ֆորումներ կազմակերպող մարդիկ պետք է հասկանան, թե ինչ խնդիրներ կան ԼԳԲՏ՝ Եվրոպայից դուրս ապրող համայնքներում, ինչպես է կրոնը ազդում ԼԳԲՏ անձանց կյանքի որակի վրա: Եվ իհարկե, մենք իրավիճակը բարելավելու համար համագործակցության կամուրջներ կգտնենք:

Նա հույս է հայտնել, որ Հայ առաքելական եկեղեցու, ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների և իրավապաշտպանների միջև երկխոսություն կլինի՝ ընդհանուր հայտարարի գալու և մարդկանց խտրականության չենթարկելու շուրջ:

«Ստիպված եմ ճշմարտությունն ասել. ԼԳԲՏ թեման Հայաստանում շատ քաղաքականացված է: Այս հապավումը հիմնականում արտաբերվում է ոչ թե իրավունքի տեսանկյունից և այն կոնտեքստում, որ ԼԳԲՏ անձինք նույնպես մեր հասարակության անդամներն են, այլ՝ քաղաքական, և համայնքը օգտագործվում է քաղաքական նպատակներով»,- ընդգծում է Սահակյանը:

Նրա կարծիքով պատճառը պետական մակարդակով արվող պրոռուսական ուժեղ քարոզչությունն է.
«Խոսվում է այն մասին, որ Եվրոպան ու Ամերիկան շատ վատն են: Լուրեր են տարածում, որ Եվրոպան ավանդական հայկական ընտանիքները կազմալուծելու, անկախության թուլացման և ծնելիության մակարդակի նվազեցման քարոզչություն է անում»,-եզրափակում է նա:

ՍՈՑԳՈՎԱԶԴՆԵՐԻ ՆԱԽԱԴԻՏՈՒՄ – ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նկարել է 3 կարճ սոցիալական հոլովակներ, որոնք վեր են հանում ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրականությունն ու անհանդուրժողականությունը, Հայաստանում տիրող մթնոլորտը նրանց հանդեպ:



Դրանց միջոցով ցանկանում ենք բարձրացնել հասարակության շրջանում ԼԳԲՏ անձանց իրավունքների հարցը:

Մինչև սոցգովազդների հրապարակումը ՆՍՀԿ-ն կազմակերպել էր հոլովակների նախադիտում, որի ձևաչափն էր ընտրվել ֆոկուս խմբային քննարկումը:

Ներկա գտնվողները առանձին-առանձին դիտեցին հոլովակները և մանրամասն ու անկեղծ կարծիքներ հայտնեցին դրանց վերաբերյալ:

Բոլոր կարծիքները, դիտողություններն ու առաջարկները կարևորելով՝ կաշխատենք սոցգովազդները հարմարացնել հասարակության պահանջներին:

Հասարակության մեջ արմատացած բռնությունը, կարծրատիպային ու խտրական վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց հանդեպ ստիպում է շատերին հիասթափվել կյանքից, մարդկանցից, երկրից, միջավայրից: Սակայն ամեն ինչ կարող էր լինել այլ կերպ, երբ հասարակությունը գիտակցեր մարդու՝ բարձրագույն արժեք լինելը, նրա անխախտելի իրավունքները...

Պարտադիր չէ, որ տեսանյութում նկարահանված անձինք լինեն ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներ:

©Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ

ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 23-ին ՆՍՀԿ գրասենյակում տեղի ունեցավ «Առաջին բուժօգնություն» թեմայով դասընթաց։

Դասընթացավար Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց հետևյալ թեմաները՝ առաջին բուժօգնության սահմանումներ, կենդանության և մահացության նշաններ, արյունահոսություն, վնասվածքներ, էլեկտրահարում, ջրահեղձություն, այրվածք, կրծքահեղձուկ, սրտամկանի ինֆարկտ, համաճարակներ։

Դասընթացը անցավ ակտիվ քննարկումների և հարց ու պատասխանի մթնոլորտում։ Մասնակիցները կարևորեցին նման թեմաներով դասընթացները և նմանատիպ նոր հնարավորությունների հույս հայտնեցին։

ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՔՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2018 թվականի սեպտեմբերի 11-ին մեկնարկեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված վեցօրյա սեմինարը՝ ՔՀԿ ներկայացուցիչների կարողությունների զարգացում մարդու իրավունքների, հանրային խոսքի հմտությունների, մոնիթորինգի և հաշվետվողականության ոլորտներում։

Դասընթացի առաջին օրվա դասընթացավար Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց խարանի և խտրականության կանխարգելում, ատելության խոսք թեմաները։

Երկրորդ օրվա առաջին կեսը նվիրված էր ՄԻԵԴ և դիմելու ընթացակարգը թեմային, որը կրկին վարեց Անահիտ Մկրտչյանը, իսկ օրը շարունակեց Արա Ղարագյոզյանը՝ պատմելով խոշտանգումների մասին ։

Դասընթացի հաջորդ երկու օրերին դասընթացավար Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց երկուական թեմա՝ հանրային խոսքի հմտություններ, զանգվածային լրատվություն և հանրային կապեր, ռազմավարական պլանավորում, ապահով տարածք խոցելի խմբերի համար:

Դասընթացի եզրափակիչ հատվածը նվիրված էր ծրագրային մոնիթորինգի և հաշվետվողականության թեմաներին, որոնք ներկայացրեց Լևոն Բարսեղյանը:

Դասընթացը հագեցած էր ինտերակտիվ խաղ-վարժանքներով, տեսական և գործնական մասերի համադրությամբ:

Ո՞Վ Է ՀԱՋՈՐԴԸ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ

Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ի աշխատակիցներն արեցին իրենց բողոքի քայլն ընդդեմ ընտանեկան բռնության՝ մասնակցելով Հոկտեմբերի 1-ին Ազատության հրապարակում կազմակերպված հիշատակի մոմավառությանը:

Ըստ ՆՍՀԿ իրավաբան Անահիտ Մկրտչյանի՝ ընտանեկան բռնությունը ՀՀ-ում շարունակում է մնալ լրջագույն խնդիրներից մեկը. «Շուրջ 3 տարի աշխատելով ընտանեկան բռնությունների կանխարգելման ոլորտում՝ ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների հետ, եկել եմ այն հետևության, որ դա ոչ միայն օրենսդրական բացի, այլև հասարակության մի ստվար զանգվածի կողմից այդ երևույթն արդարացնելու ու թաքցնելու արդյունք է: Չնայած որոշակի փոփոխություններին, սակայն, այնուամենայնիվ իրավապաշտպանների և բռնության ենթարկված կանանց ջանքերով 2017թ.-ի դեկտեմբերի 13-ին վերջապես ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եվ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը: Սա համարում եմ մեծ պայքարի հաջողություններից մեկը: Մնում է ստեղծել համապատասխան մեխանիզմներ օրենքի կիրարկումն ապահովելու համար»:

2010թ-ից սկսած, երբ հոկտեմբերիր 1-ին՝ ամուսնու կողմից տևական ծեծի արդյունքում զոհվեց Մասիսի բնակիչ, 19-ամյա Զարուհի Պետրոսյանը, Հայաստանում նշվում է «Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օրը»: Ընդդեմ կանաց նկատմամբ բռնության կոալիցիան ամեն տարի այդ օրն իրականացնում է հանրային միջոցառում՝ ուղղված Հայաստանում ընտանեկան բռնության կանխարգելմանը:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տվյալների՝ 2018 թվականի առաջին կիսամյակում ընտանեկան բռնության զոհ է դարձել 8 մարդ:

Չեխական կողմի հետ համագործակցությունը լինելու է շարունակական. ՆՍՀԿ նախագահ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ներկայացուցիչները սեպտեմբերի 23-28 Չեխիայում մասնակցեցին տեղի Պորադնա կազմակերպության կողմից անցկացվող «Խտրականության դեպքերի իրավիճակային դիտարկում» աշխատանքային հանդիպմանը: Ըստ ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանի այցի նպատակը Չեխիայում մարդու իրավունքների, խտրականության և ատելության դեմ պայքարում ներգրավված ՔՀԿ-ների և ՄԻՊ-ի աշխատանքը ուսումնասիրելն ու խտրականության դեպքերի փաստագրում կատարել էր՝ հետագայում այս փորձի օրինակով Հայաստանում ևս խտրականության դեպքերի փաստագրում անցկացնելու համար:

«Պորադնա կազմակերպությունը ծավալում է իրավապաշտպան գործունեություն՝ մասնավորապես աշխատելով Չեխիայում խտրականության կանխարգելման ուղղությամբ»,- ընդգծում է ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը՝ հավելելով, որ այցի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ Պրահա քաղաքում գործող մի շարք ոլորտային ՔՀԿ-ների ներկայացուցիչների, ինչպես նաև Չեխիայի ՄԻՊ-ի հավասար վերաբերմունքի վարչության պետ Պյոտր Պոլակի հետ:

Վերջինները ՆՍՀԿ անդամներին ներկայացրել են Չեխիայում խտրականության և ատելության դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրությունը, պաշտպանության մեխանիզմները, պետական ու քաղաքացիական հասարակության կառույցների միջև համագործակցության շրջանակները:

«Ձեռք բերվեց համատեղ փոխանակման ծրագրեր իրականացնելու համաձայնություն»,-ասում է Սերգեյ Գաբրիելյանը և ընդգծում, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ունի բազմամյա համագործակցության փորձ Հայաստանում Չեխիայի դեսպանատան հետ, իսկ Պորադնա կազմակերպության հետ համագործակցում է 2018 թ.-ի հունիսից, երբ «Ինչպես գտնել ուղին» ծրագրի շրջանակներում:

«Այս հանդիպումը համարում ենք հաջողված և արդյունավետ, քանզի այն միտված է խտրականության կանխարգելման գաղափարին: Իսկ տվյալ ժամանակաշրջանում ՀՀ-ի համար այն ամենահրատապ և արդիական թեման է և չեխական կողմի հետ համագործակցությունը լինելու է շարունակական: 2018թ.-ին կրկին նախատեսվում է Պորադնա կազմակերպության ներկայացուցիչների այցը Հայաստան, որի ժամանակ Կողմերը կամփոփեն ծրագրի արդյունքները և կքննարկեն 2019թ.-ի համատեղ ծրագրերը, որոնք, ամենայն հավանականությամբ, միտված կլինեն երկու երկրների իրավապաշտպանների և ՄԻՊ-երի փորձի փոխանակմանը»,-եզրափակեց ՆՍՀԿ նախագահը:

Աշխատանքային հանդիպումը կազմակերպվել է չեխական Poradna pro občanství, občanská a lidská práva կազմակերպության կողմից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի հետ համատեղ Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Անցումային առաջխաղացման ծրագրի» շրջանակներում:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2018 թ հունիս- սեպտեմբեր ամիսների ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից տրամադրվել է 158 իրավաբանական խորհրդատվություն և 8 դատական ներկայացուցչություն

«ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու տեղեկացվածության մակարդակի բարձրացումը տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդկանց (SUS) և տրանս անձանց շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում հունիսից մինչև սեպտեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում ՄԻԱՎ-ի, սեռական ճանապարհով փոխանցվող վիրուսների (ՍՃՓՎ) նկատմամբ հետազոտվել է 464 շահառու, որի ընթացքում հայտնաբերվել է ՄԻԱՎ դրական 6 նոր դեպք:
ՄԻԱՎ դրական շահառուները ուղղորդվել են ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն:

ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝

Իրավական՝
- Իրավաբանական խորհրդատվություն
- Իրավական փաստաթղթերի ձևակերպում
- Քաղաքացիական և քրեական գործերով դատական ներկայացուցչություն
- Ռազմավարական դատավարություն

Առողջապահական՝
- ՄԻԱՎ-ի վերաբերյալ նախաթեստային և հետթեստային անանուն խորհրդատվություն
- Անանուն ՄԻԱՎ-ի թեստավորում և ՍՎ հետազոտություն
- Պահպանակների և լուբրիկանտների տրամադրում

Աջակցություն՝
- Տարածքի տրամադրում հանդիպումների և միջոցառումների կազմակերպման համար
- Սոցիալական աջակցություն անապահով ընտանիքներին
- Խորհրդատվություն ՔՀԿ-ներին և աջակցություն ենթադրամաշնորհների տեսքով

ԹԵԺ ԳԻԾ

+374 (0) 60 478989

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը: